ԲԱՐԵՊԱՇՏՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԷԹ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ.

Աստրախանայ հայազգի Այրի կին Եղիսաբէթ Հայրապետեան Թումաղեանց իւր խնդրագրոյ հետը ի 10 ներկայ ամսոյ առաջարկեց Հոգևոր ծխական երկսեռ դպրոցաց Հոգաբարձութեան մի հազար ռուբլի արծաթի, և խնդրեց այն գումարը արկանել դրամատուն վասն շահաբերութեան և նորա տոկոսօք վարժել Օրիորդական Դպրոցի մէջ մի չքաւոր որբ աղջիկ ի յիշատակ հանգուցեալ դստեր իրոյ Օրիորդի Աննայի Ոսկանեան Թումաղեանց:

Հոգաբարձութիւնը համաձայն խնդրոյ նորա առւեց այն գումարը Դրամատուն շահաբերութեան, և նորա տոկոսիքով պահումն Դպրոցի մէջ մի չքաւոր անհայր աշակերտուհի ուսուցանելով Հայերէն և Ռուսերէն լեզուի աւանդելի առարկաները, և անուանեց այն օրիորդը "Սանուհի Աննայի Ոսկանեան Թումաղեանց": Այսօրինակ ազգօգուտ նուիրագործութիւնը այրւոյն Թումաղեանցի Հոգաբարձական Խորհրդարանը խնդրումն խոնարհաբար հրատարակել ի գիտութիւն համազգեաց՝ միջոցաւ Արարատ ամսագրոյ:

Հոգաբարձուք Յովսէփ Աւագ քահանայ Բունիաթեանց
Յովհաննէս Սարգսեանց
Սիմէոն Պօպօվեանց.

Համար 61.

Ի 15 Օգոստոսի 1874 ամի,
յԱստրախան.

ԱՌ ՄՇԱԿ.

Մշակ լրագրոյդ սովորական եղած նոր ոճով՝ 38րդ թուոյ մէջ ես մի քանի անհիմն լուր հետ՝ հրատարակած էիր՝ թէ "Մենք լսում ենք որ Էջմիածնի նոր Ճեմարանի օծման հանդէսը կկատարուի Սեպտեմբերի 28ին", սակայն դու Հայ գոլով՝ քեզ գիտել անհրաժեշտ էր և է՝ զի Հայաստանեայց Եկեղեցին օծման հանդէս կըկատարէ Նորակառոյց Եկեղեցեաց համար, իսկ դպրոցաց՝ ինչպէս նաև Ճեմարանի համար եղածը՝ օրհնութեան հանդէս է, որ աւելի պարզն ասելով՝ Խաչահանգստով կկատարուի, և օծման և օրհնութեան բառից և արարողութեանց մէջ մեծ տարբերութիւն կայ։ Զայս և այլ այսպիսիքը երբև Հայ քաջ պիտի իմանաս, որպէս զի Խմբագրական պաշտօնավարութեանդ մէջ կամայ կամ ակամայ այսպիսի սխալմանց չենթարկուիս, և այլոց թեթև սխալմունքը կամ օտար ազգաց վերաբերեալ բառից թարգմանութեանց թերութիւնքը ծաղրած ժամանակդ՝ դու աւելի ես մեծ ծաղու արժանի չլինիս՝ նոյն իսկ քեզ՝ այս ինքն սեպհականուածդ Ազգի վերաբերեալները չիմանալով։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿՔ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ.

Պօլսոյ Ազգային լրագիրք աւետեցին Երամեան Վսեմ. Աբրահամ Պէյի Մէճիտիէ փաշայութեան և Վէզիրութեան բարձր աստիճանով պսակուիլը, ընդ որ մեծապէս ուրախ ենք յիշեալ փաշայի Ազգասիրական գործովք եւ նշանաւոր և բարեհամբաւեալ լինելոյն համար։